Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-707-13.11.2023-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունում «կամ քաղաքացիություն չունեցող անձը» բառերը փոխարինել «, քաղաքացիություն չունեցող անձը կամ փախստականի կարգավիճակ ունեցող անձը» բառերով:»:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 1-ին կետը «Հայաստանի փրկարար ծառայության» բառերից հետո լրացնել «, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության, ոստիկանության, փրկարար ծառայության, ազգային անվտանգության ծառայության» բառերով.

2) 3-րդ կետը «կատարողը» բառից հետո լրացնել «, Լեռնային Ղարաբաղի քրեակատարողական ծառայողը եւ դատական ակտերի հարկադիր կատարողը» բառերով:

Հոդված 3. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) սույն մասի 1-4-րդ կետերում նշված՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում ձեռք բերված աշխատանքային եւ այլ գործունեության, զինվորական ծառայության ժամանակահատվածները՝ Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 4. Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «է», 2-րդ կետի «ե», 3-րդ կետի «ը» ենթակետերում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «Կառավարության կողմից» բառերով:

Հոդված 5. Օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասը «այդ թվում՝» բառերից հետո լրացնել «Լեռնային Ղարաբաղի տարածքում ձեռք բերած աշխատանքային ստաժը, ինչպես նաեւ» բառերով:

Հոդված 6. Օրենքի 33-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9.2-րդ մասով.

«9.2. Փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու եւ կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգի առանձնահատկությունները սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 7. Օրենքի 47-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Շտեմարանը ձեւավորվում է նաեւ փախստականի կարգավիճակ ունեցող անձի վերաբերյալ միգրացիայի եւ քաղաքացիության բնագավառում լիազոր մարմնից ստացված՝ Կառավարության սահմանած տվյալներից:».

2) 3-րդ մասը «կառավարման» բառից հետո լրացնել «եւ» բառով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հոդված 9. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-707-13.11.2023-ԱՍ-011

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~1)~~***Հոդված 1.*** «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունում «կամ քաղաքացիություն չունեցող անձը» բառերը փոխարինել «, քաղաքացիություն չունեցող անձը կամ փախստականի կարգավիճակ ունեցող անձը» բառերով:»:

Հոդված ~~1~~2. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 1-ին կետը «Հայաստանի փրկարար ծառայության» բառերից հետո լրացնել «, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության, ոստիկանության, փրկարար ծառայության, ազգային անվտանգության ծառայության» բառերով.

2) 3-րդ կետը «կատարողը» բառից հետո լրացնել «, Լեռնային Ղարաբաղի քրեակատարողական ծառայողը եւ դատական ակտերի հարկադիր կատարողը» բառերով:

Հոդված ~~2~~3. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) սույն մասի 1-4-րդ կետերում նշված՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում ձեռք բերված աշխատանքային եւ այլ գործունեության, զինվորական ծառայության ժամանակահատվածները՝ Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված ~~3~~4. Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «է», 2-րդ կետի «ե», 3-րդ կետի «ը» ենթակետերում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «Կառավարության կողմից» բառերով:

Հոդված ~~4~~5. Օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասը «այդ թվում՝» բառերից հետո լրացնել «Լեռնային Ղարաբաղի տարածքում ձեռք բերած աշխատանքային ստաժը, ինչպես նաեւ» բառերով:

Հոդված ~~5~~6. Օրենքի 33-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9.2-րդ մասով.

«9.2. Փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու եւ կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգի առանձնահատկությունները սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված ~~6~~7. Օրենքի 47-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Շտեմարանը ձեւավորվում է նաեւ փախստականի կարգավիճակ ունեցող անձի վերաբերյալ միգրացիայի եւ քաղաքացիության բնագավառում լիազոր մարմնից ստացված՝ Կառավարության սահմանած տվյալներից:».

2) 3-րդ մասը «կառավարման» բառից հետո լրացնել «եւ» բառով:

Հոդված ~~7~~8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հոդված ~~8~~9. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-707-13.11.2023-ԱՍ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող՝ «1) «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունում «կամ քաղաքացիություն չունեցող անձը» բառերը փոխարինել «, քաղաքացիություն չունեցող անձը կամ փախստականի կարգավիճակ ունեցող անձը» բառերով:» փոփոխությունում «1)» համարակալումը փոփոխել «Հոդված 1.» բառերով , ըստ այդմ՝ փոփոխել հոդվածների համարակալումը, համապատասխանաբար՝ «1-ը 2-ով, 2-ը 3-ով, 3-ը 4-ով, 4-ը 5-ով, 5-ը 6-ով, 6-ը 7-ով, 7-ը 8-ով, 8-ը 9-ով»:	***Ընդունվել է***	***Ընդունվել է***
2.	***ՀՀ կառավարություն***		Նախագիծը լրացվել է՝ «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**	***Ընդունվել է:*** Նախագծերի փաթեթը լրացվել է	***Ընդունվել է***

			«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **Հոդված 1.** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 70-րդ հոդվածի՝ 1) 4-րդ մասում «Մարտական խաչ» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով «Մարտական խաչ»» բառերով . 2) 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին մաս. «3.1. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթները տարածվում են նաև Լեռնային Ղարաբաղի տարածքում ծառայած զինծառայողների, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների վրա՝ Կառավարության սահմանած կարգով:». 3) 5-րդ մասը «ստացած և» բառերից	նոր օրենքի նախագծով:	

			հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով» բառերով. 4) 8-րդ մասում «2-րդ և 3-րդ» բառերը փոխարինել «2-րդ, 3-րդ և 3.1-ին» բառերով: **Հոդված 2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:		